ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

26.04.2024թ.
ք. Երևան
Ժամը 11^{20}

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, փոխգնդապետ Գ. Սարգսյանը (ԳԱՊ) բացակայում է նիստից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետ, գնդապետ Է. Գաբրիելյանը:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի պետ, գնդապետ Է. Գաբրիելյան,
ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչության ՏԱ բաժնի սպա, ավագ սպա Խ. Երիցյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ռ. Զադոյան:

Բացակայում է՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ, փոխգնդապետ Գ. Սարգսյանը (ԳԱՊ):

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ, Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս.Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս.Եսոյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս.Եսոյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ընթացակարգին «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ համաձայն ՀՀ Ֆինանսների Նախարության N 03/12-1/2884-2024 գրության, գնահատող հանձնաժողովը 26.04.2024թ. որոշեց կասեցնել նիստը և վերոնշյալ փաստաթղթի իսկությունը ստուգելու նպատակով դիմել ՀՀ ֆինանսաբյուջետային վարչությանը: 03.05.2024թ. շարունակելով հայտերի գնահատման և ամփոփման նիստը՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ֆինանսաբյուջետային վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Գնման գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման գինը)	Մրցույթին մասնակցող կազմակերպության			
					անվանումը	գնային առաջարկը /ՀՀ դրամ/		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	սեղանի համակարգիչներ	հատ	150	42,000,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	34 350 000	6 870 000	41 220 000
2	դյուրակիր համակարգիչներ	հատ	150	40,500,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	32 962 500	6 592 500	39 555 000
3	դյուրակիր համակարգիչներ	հատ	206	37,080,000	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	30 797 000	6 159 400	36 956 400

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 03.05.2024թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-1/7» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Է. Գաբրիելյան

Գնահատող Խ. Երիցյան

Գնահատող Ռ. Զադոյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան